ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 1911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

------ 2025 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 1911-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ և 24-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» N 1911-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Որոշման N 4 հավելվածի՝ **Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի՝**

ա. «I. Գավառի տարածաշրջան» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ կետով.

«8. «Միաձուլման ձևով վերակազմակերպել

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սարուխանի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 70.210.861202) և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գանձակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային

կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 70.210.852067)՝ ստեղծելով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 1 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 1 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի ստեղծման նպատակը՝ բնակչության առողջության պահպանում, բարելավում, առողջ ապրելակերպի քարոզչություն, հիվանդությունների կանխարգելում, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող արտահիվանդանոցային բուժօգնության տրամադրումն է: «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 1 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության տեսակը՝ բժշկական օգնություն և սպասարկում:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 1 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման լիազոր մարմին է հանդիսանում Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը (այսուհետև՝ լիազոր մարմին), որն ունի պետական կազմակերպության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լճափի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 70.210.852195), Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Նորատուսի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 70.210.873482) և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Կարմիրգյուղի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 70.210.872431)՝ ստեղծելով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 2 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 2 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի ստեղծման նպատակը՝ բնակչության առողջության պահպանում, բարելավում, առողջ ապրելակերպի քարոզչություն, հիվանդությունների կանխարգելում, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող արտահիվանդանոցային բուժօգնության տրամադրումն է: «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 2 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության տեսակը՝ բժշկական օգնություն և սպասարկում:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 2 առողջության

կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման լիազոր մարմին է հանդիսանում Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը (այսուհետև՝ լիազոր մարմին), որն ունի պետական կազմակերպության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

բ. «**II. Մարտունու տարածաշրջան**» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 13-րդ կետով.

«13. «Միաձուլման ձևով վերակազմակերպել

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Երանոսի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 76.210.865451), Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 76.210.862198), Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ձորագյուղի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 76.210.855173), Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծակքարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 76.210.864451) և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 76.210.870460)՝ ստեղծելով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 3 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 3 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի ստեղծման նպատակը՝ բնակչության առողջության պահպանում, բարելավում, առողջ ապրելակերպի քարոզչություն, հիվանդությունների կանխարգելում, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող արտահիվանդանոցային բուժօգնության տրամադրումն է: «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 3 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության տեսակը՝ բժշկական օգնություն և սպասարկում:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 3 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման լիազոր մարմին է հանդիսանում Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը (այսուհետև՝ լիազոր մարմին), որն ունի պետական կազմակերպության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լիճքի

առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 76.210.863930), Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ներքին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 76.210.866558) և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վերին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 76.210.872824)՝ ստեղծելով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 4 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 4 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի ստեղծման նպատակը՝ բնակչության առողջության պահպանում, բարելավում, առողջ ապրելակերպի քարոզչություն, հիվանդությունների կանխարգելում, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող արտահիվանդանոցային բուժօգնության տրամադրումն է: «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 4 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության տեսակը՝ բժշկական օգնություն և սպասարկում:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 4 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման լիազոր մարմին է հանդիսանում Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը (այսուհետև՝ լիազոր մարմին), որն ունի պետական կազմակերպության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Արծվանիստի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 76.210.873506), Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովինարի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 76.210.872176) և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիկի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 76.210.867743)՝ ստեղծելով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 5 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 5 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի ստեղծման նպատակը՝ բնակչության առողջության պահպանում, բարելավում, առողջ ապրելակերպի քարոզչություն, հիվանդությունների կանխարգելում, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման

շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող արտահիվանդանոցային բուժօգնության տրամադրումն է։ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 5 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության տեսակը՝ բժշկական օգնություն և սպասարկում։

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 5 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման լիազոր մարմին է հանդիսանում Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը (այսուհետև՝ լիազոր մարմին), որն ունի պետական կազմակերպության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի։

4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղհովիտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 76.210.864643), Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Զոլաքարի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 76.210.865085), «Աստղաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 76.210.865381) և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վաղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 76.210.863366)՝ ստեղծելով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 6 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն։

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 6 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի ստեղծման նպատակը՝ բնակչության առողջության պահպանում, բարելավում, առողջ ապրելակերպի քարոզչություն, հիվանդությունների կանխարգելում, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող արտահիվանդանոցային բուժօգնության տրամադրումն է։ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 6 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության տեսակը՝ բժշկական օգնություն և սպասարկում։

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 6 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման լիազոր մարմին է հանդիսանում Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը (այսուհետև՝ լիազոր մարմին), որն ունի պետական կազմակերպության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի։

գ. «**III. Վարդենիսի տարածաշրջան**» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ կետով.

«8. «Միաձուլման ձևով վերակազմակերպել

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Կարճաղբյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 58.210.853725), Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լուսակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 58.210.872831) և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 58.210.872128)՝ ստեղծելով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 7 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 7 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի ստեղծման նպատակը՝ բնակչության առողջության պահպանում, բարելավում, առողջ ապրելակերպի քարոզչություն, հիվանդությունների կանխարգելում, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող արտահիվանդանոցային բուժօգնության տրամադրումն է: «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 7 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության տեսակը՝ բժշկական օգնություն և սպասարկում:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 7 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման լիազոր մարմին է հանդիսանում Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը (այսուհետև՝ լիազոր մարմին), որն ունի պետական կազմակերպության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մեծ Մասրիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 58.210.854740), Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղամասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 58.210.860422) և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 58.210.854636)՝ ստեղծելով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 8 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 8 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի ստեղծման նպատակը՝ բնակչության

առողջության պահպանում, բարելավում, առողջ ապրելակերպի քարոզչություն, հիվանդությունների կանխարգելում, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող արտահիվանդանոցային բուժօգնության տրամադրումն է: «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 8 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության տեսակը՝ բժշկական օգնություն և սպասարկում:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 8 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման լիազոր մարմին է հանդիսանում Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը (այսուհետև՝ լիազոր մարմին), որն ունի պետական կազմակերպության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

դ. «**IV. Սևանի տարածաշրջան**» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 11-րդ կետով.

«11. «Միաձուլման ձևով վերակազմակերպել

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լճաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 87.210.873614), Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Դդմաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 87.210.869232) և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 87.210.872161)՝ ստեղծելով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 9 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 9 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի ստեղծման նպատակը՝ բնակչության առողջության պահպանում, բարելավում, առողջ ապրելակերպի քարոզչություն, հիվանդությունների կանխարգելում, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող արտահիվանդանոցային բուժօգնության տրամադրումն է: «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 9 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության տեսակը՝ բժշկական օգնություն և սպասարկում:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 9 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման լիազոր մարմին է հանդիսանում Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը (այսուհետև՝ լիազոր մարմին), որն ունի պետական կազմակերպության

գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2. Սահմանել

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների միաձուլման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում ստեղծված յուրաքանչյուր ՊՈԱԿ-ին, սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմն ու արժեքը՝ համաձայն հավելված N 1-ի:

2) Վերակազմակերպված իրավաբանական անձանց իրավահաջորդը վերակազմակերպման արդյունքում ստեղծված իրավաբանական անձինք են և վերջիններիս են անցնում վերակազմակերպման արդյունքում ստեղծված իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտերին համապատասխան՝

ա. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 1 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սարուխանի բժշկական ամբուլատորիա» և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գանձակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավահաջորդն է

բ. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 2 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լճափի առողջության առաջնային պահպանման կենտրոն», Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Նորատուսի բժշկական ամբուլատորիա» և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Կարմիրգյուղի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավահաջորդն է

գ. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 3 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Երանոսի բժշկական ամբուլատորիա», Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն», Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ձորագյուղի բժշկական ամբուլատորիա», Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծակքարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավահաջորդն է

դ. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 4 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լիճքի առողջության առաջնային պահպանման կենտրոն», Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ներքին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» և Հայաստանի

Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վերին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավահաջորդն է

ե. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 5 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Արծվանիստի առողջության առաջնային պահպանման կենտրոն», Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովինարի բժշկական ամբուլատորիա» և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վարդենիկի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավահաջորդն է

զ. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 6 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղհովիտի առողջության առաջնային պահպանման կենտրոն», Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Զոլաքարի բժշկական ամբուլատորիա», «Աստղաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն» և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Վաղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավահաջորդն է

է. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 7 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Կարճաղբյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն», Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լուսակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավահաջորդն է

ը. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 8 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Մեծ Մասրիկի առողջության առաջնային պահպանման կենտրոն», Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գեղամասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ակունքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավահաջորդն է

թ. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի N 9 առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լճաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն», Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Դդմաշենի բժշկական ամբուլատորիա» և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների իրավահաջորդն է:

3) Վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարվելու են վերակազմակերպման արդյունքում ստեղծված իրավաբանական անձանց միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում վերապահել՝ վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, միաձուլման մասին պայմանագրերը, վերակազմակերպման կարգը և պայմանները, փոխանցման ակտերն ու նոր ստեղծվող պետական ոչ առևտրային կազմակերպություններին սեփականության իրավունքով հանձնվող և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը, արժեքները հաստատելու լիազորություններ:

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 8-րդ ամսում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել հաշվետվություններ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների իրականացման մասին:

4. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի գ, դ, ե, է ենթակետերով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

5. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշման 3-րդ կետում նշված գործընթացների ավարտից հետո քառամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետում նշված իրավաբանական անձանց անշարժ գույքի անհատույց և անժամկետ տրամադրման մասին որոշումներում (պայմանագրերում) կատարել համապատասխան փոփոխություններ:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Ն. Փաշինյան

վարչապետ

Երևան